ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

«ՀՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹ»
աստվածաշնչյան դասընթաց

Դաս 6

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Մենք բոլորս էլ գիտենք ֆիզիկական օրենքը, որը գործում է նյութական աշխարհում՝ պատճառի և հետևանքի օրենքը: «Չկա հետևանք առանց պատճառի»: Սուրբ Գրքում այդ ճշմարտությունն արտահայտված է հետևյալ խոսքերով. «Ինչ որ մարդ սերմի, այն էլ կհնձի» (Գաղատացիս 6.8): Եթե գյուղացին իր դաշտում գարի է ցանում, նա չի կարող սպասել, թե ցորեն կաճի: Դա միանգամայն ակնհայտ է:

Այդ նույն օրենքը գործում է և հոգևոր կյանքում: Մարդուն ընտրության լիակատար ազատություն է տրված, ցանկանո՞ւմ է արդյոք նա Աստծո կամքի համաձայն ապրել, որն արտահայտված է Նրա սուրբ օրենքում, թե՞ ոչ: Ամեն մեկը պատասխանատու է իր ընտրության համար և, ի վերջո, կհնձի այն, ինչ ցանել է: Աստծո դատի ժամանակ յուրաքանչյուր մարդու ճակատագիրն արդարացիորեն կորոշվի այն բանի հիման վրա, թե ինչպես է նրա կյանքն անցել: Քրիստոսն՝ Ինքը այդ ճշմարտությունը բազմիցս ընդգծել է Իր ուսմունքի մեջ:

«Եվ երբ որ մարդի Որդին Իր փառքով կգա և ամեն սուրբ հրեշտակները Նրա հետ, այն ժամանակ կնստի Իր փառաց աթոռի վրա և ամեն ազգերը կժողովվեն Նրա առաջ, և Նա նրանց կբաժանի իրարից, ինչպես հովիվը բաժանում է ոչխարներն այծերից, և ոչխարներն Իր աջ կողմին կկանգնեցնի, իսկ այծերը՝ ձախ կողմին» (Մատթեոս 25.31-33):

Շատերի մոտ այնպիսի կարծիք է ստեղծվել, որ Աստված բաժանում է արդարներին մեղավորներից անմիջապես մահից հետո, որ բարի մարդը հենց հիմա անցնում է դրախտ, իսկ մեղավորը՝ դժոխք, որտեղ և պետք է տանջվի հավիտյան:

Հավիտենական կյանքի մասին հարցը քննարկվում է այս շարքի «Կյանքի գաղտնիքը» հոդվածում: Այժմ մենք կցանկանայինք տեսնել, թե ինչպիսի ճակատագիր է սպասվում մեղավորներին, ովքեր Աստծո փրկության պարգևը չեն ընդունել: Հաճախ մարդկանց վախեցնում են դժոխքով այն աստիճան, որ նրանք կորցնում են հոգևոր հավասարակշռությունը և հավատը երկնային սիրող Հոր նկատմամբ, Ով հավիտյան տանջելու է նրանց՝ իրենց կարճատև կյանքի ընթացքում կատարած սխալների համար:

Ի՞նչ է իրենից ներկայացնում դժոխքը, և որտե՞ղ է այն:

Այդ հարցին խելամիտ պատասխան տալու համար ամենից առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ են սովորաբար հասկանում դժոխք ասելով: Մենք հակված ենք հավատալ այն ամենին, ինչ մեզ մանկությունից են սովորեցնում, և շատ մարդկանց մտքով նույնիսկ չի անցնում Աստծո խոսքի հիման վրա ստուգել այն, ինչին իրենք հավատում են: Սովորություններն ու ավանդույթները մեծ հեղինակություն են վայելում հատկապես կրոնական հավատալիքների ոլորտում: Հաճախ Սուրբ Գիրքը հետին պլան է մղվում հանուն

ավանդույթների և հավատալիքների, որոնցից շատերն ընդհանրապես քրիստոնեական ծագում չունեն, այլ փոխառված են հեթանոսական առասպելներից: Կրոնական գրող Ֆրանց Բախը այդ առիթով ասել է. «Մեր մշակույթը և գիտելիքները քրիստոնեության և հեթանոսության խառնուրդ են Ինչպես գերմանական, այնպես էլ հին հունական և հին հռոմեացի տարրերն այնքան են խառնված, որ եկեղեցու ուսմունքում անբաժանելի ամբողջություն են կազմում»:

Հանրաճանաչ գրող Դանթեն (1265-1321թթ.) իր հայտնի աշխատության՝ «Աստվածային կատակերգության» մեջ նկարագրում է երևակայական ճանապարհորդություն դեպի դժոխք, քավարան և դրախտ: Հին հռոմեական գրող Վերգիլիոսի հոգին ուղեկցում է նրան: Միասին նրանք այցելում են մեղավորների տանջանքի և պատժի տարբեր տեղեր և վերջապես հասնում են մինչև դժոխքի հատակը, որն իբր գտնվում է երկրի կենտրոնում: Այնտեղ նրանք տեսնում են սատանային՝ մի գարշելի հրեշի, որն իր երեք երախներով միաժամանակ տանջում էր երեք մեղավորների: Ամենից շատ տանջանքներ կրում է Հուդա Իսկարիովտացին: Մեղավորների հատուկ տեսակը հատուկ պատժի է արժանանում. կեղծավորները պտտվում են անդունդի շուրջը՝ արճիճե գլխարկները գլխներին, գողերը փախչում են վիշապից, որը հետապնդում է նրանց՝ կրակ ժայթքելով, Աստծուն հայհոյողները տանջվում են կրակե անձրևից, հպարտները գլորում են ծանր քարերը, նախանձները շարված են երկաթե թելի վրա, որն անցնում է նրանց աչքերի միջով, գանձագողերը լողում են եռացող ձյութի մեջ և այլն:

Գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող այդ երկը, այնուամենայնիվ, մարդու երևակայության, ֆանտազիայի արդյունք է: Համենայն դեպս, միլիոնավոր մարդիկ դրան հավատում են որպես փաստ և իրենց կրոնական հավատալիքների մասն են համարում: Ուստի ճշմարտությունը հորինվածքից տարբերել կարողանալու համար անհրաժեշտ է դիմել ճշմարտության միակ աղբյուրին, որի մասին Հիսուս Քրիստոսն ասաց. «Քո խոսքը ճշմարտություն է» (Հովհաննես 17.17):

Դժոխքում հավիտենական տանջանքների, ինչպես նաև անմահ հոգու մասին ուսմունքները, քրիստոնեական եկեղեցու կողմից փոխառված են հին հունական, հեթանոսական փիլիսոփայությունից: Շատերին դա կարող է տարօրինակ թվալ, բայց «դժոխք» բառը Սուրբ Գրքում ամենևին էլ չի նշանակում այն տեղը, ուր կրակ է վառվում:

Հին կտակարանում «դժոխք» բառը հանդիպում է 65 անգամ և թարգմանված է երբայերեն «շեոլ» բառից, որը նշանակում է «մեռելների թագավորություն»: Հայերեն այն թարգամանված է «դժոխք», «գերեզման», «մեռելների բնակարան» և ամենևին էլ կրակի կամ պատժի պատկերացման հետ կապված չէ:

Նոր կտակարանում «դժոխք» բառը հանդիպում է 11 անգամ հետևյալ համարներում՝ Մատթեոս 11.23, 16.18, Ղուկաս 10.15, 16.23,

Գործք 2.27,31, Ա Կորնթացիս 15.55, Հայտնություն 1.18, 6.8, 20.13,14, և թարգմանված է հունարեն «հադես» բառից, որն ունի նույն նշանակությունը, ինչ հինկտակարանային «շեոլը»: Դա կարելի է պարզ տեսնել՝ համեմատելով Սաղմոս 16.10-ը Գործք 2.27-ի հետ, որտեղ Պետրոս առաքյալը մեջբերում է Դավթի խոսքերը՝ ասված Հիսուս Քրիստոսի մասին. «Որովհետև Իմ անձը չես թողնի գերեզմանում» (կամ՝ դժոխք, մեռելների բնակարան), և ինչպես երևում է վերը բերված տեքստից, դժոխքն այն տեղն է, ուր մարմինը ապականության է ենթարկվում: Հիսուս Քրիստոսը նույնպես դժոխքում է եղել, այսինքն՝ գերեզմանում, սակայն ապականության չենթարկվեց, որովհետև Աստված հարություն տվեց Նրան:

Հովհաննես առաքյալը, Հայտնություն 20.12-ում նկարագրելով Աստծո դատաստանը, ասում է. «Եվ տեսա մեռելները մեծ և փոքր կանգնած աթոռի առաջին, և գրքեր բացվեցին, և մի ուրիշ գիրք էլ բացվեց, որ է կյանքի գիրքը, և մեռելները դատվեցին այն գրքերում գրվածներից իրենց գործերի համեմատ»: Հաջորդ համարը բացատրում է, թե ինչ ձևով մեռելները կարող են Աստծո առաջ կանգնել. «Եվ ծովն իր միջի մեռելները տվեց, և մահը և դժոխքը իրենց միջի մեռելները տվեցին, և ամեն մեկն իրենց գործերի համեմատ դատվեցին»: Գրքի այս խոսքերը հաստատում են, որ դժոխքն այն տեղն է, ուր գտնվում են ոչ թե կենդանիները, այլ մեռածները, ուր գտնվում են ոչ միայն չարերը, այլև բարիները:

Նոր կտակարանում մեկ անգամ հիշատակվում է տարտարոսի խավարը. Բ Պետրոս 2.4: Թարգմանված է հունարեն «տարտարուս» բառից, որը նշանակում է «խավար, անդունդ»: Դա չար հրեշտակների բնակավայրն է, որոնք սատանայի հետ վռնդվել են երկնքից: Պողոս առաքյալը Եփեսացիս 6. 12-ում նրանց ներկայացնում է որպես «այս աշխարհի խավարի աշխարհակալներ» և «չար հոգիներ, որ երկնավորների մեջ են»: «Տարտարուսը» տանջանքի և դժոխային կրակի վայր չէ, այլ չար հոգիների բնակության վայր, որը գոյություն կունենա մինչև Աստծո դատաստանը: «Որովհետև եթե Աստված այն հրեշտակներին, որ մեղանչեցին, չխնայեց, այլ խավարի կապանքով տարտարոսը գցած դատաստանի համար պահել տրվեց»: «Եվ այն հրեշտակներին, որ իրենց իշխանությունը չպահեցին, այլ իրենց բնակությունը թողեցին, հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց մեծ օրվա դատաստանի համար» (Բ Պետրոս 2.4, Հուդա 6):

Նոր կտակարանում 12 անգամ հանդիպում է հունարեն «գեհեն» բառը (Մատթեոս 5.22,29, 30, 10.28, 18.9, 23.15,33, Մարկոս 9.42,44,46, Ղուկաս 12.5, Հակոբոս 3.6): Հենց դա է այն տարօրինակ տեղը, որը մեզ հետաքրքրում է, որովհետև այն օգտագործվում է նկարագրելու համար այն վայրը, որտեղ կրակ է վառվում: Եթե մեզ հաջողվի փաստեր գտնել «գեհենի» վերաբերյալ, ապա մենք պատկերացում կկազմենք դժոխքի մասին, որովհետև հատկապես այդ բառն է ընդունված օգտագործել, երբ խոսքը դժոխքի կրակի

մասին է:

Գեհենը Երուսաղեմի մոտ գտնվող հովիտներից մեկի, այսպես կոչված, Ենովմի որդիների ձորի հունարեն անվանումն է: Հնում այնտեղ էին բերում կենդանիների և մահապատժի ենթարկված հանցագործների դիակները: Նրանց այրում էին, և այդ պատճառով այնտեղ մշտապես կրակ էր վառվում: Հիսուսն այդ վայրի մասին ասում է. «Նրանց որդը չի մեռնում, և կրակը չի անցնում»: Այն, ինչ չէին ոչնչացրել որդերը, ոչնչացվում էր կրակով: Այդ ձորի (հովտի) անվանումը սկսեցին օգտագործել մատնանշելու համար այն տեղը, ուր բոլոր անօրենները կկրեն վերջին պատիժը և վերջնականապես կոչնչացվեն կրակի մեջ:

Բոլոր 12 համարներում, որտեղ օգտագործված է «գեհեն» բառը, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ երկու փաստին.

1. Ինչպես մարմինը, այնպես էլ հոգին պետք է գտնվեն կրակե գեհենի մեջ: Այդպես է ասվում Մատթեոս 10.28-ում: Մատթեոս 5. 29, 30-ում կարդում ենք. «բոլոր մարմինը»:

2. Այս 12 համարներից ոչ մեկում չի ասվում, թե երբ են մեղավորները գցվելու կրակե գեհենը:

Պատիժը կրակի մեջ պարզապես նկարագրվում է որպես ապագայի իրադարձություն:

Բայց այս երկու փաստերը բավականին պարզորոշ ցույց են տալիս, որ այդ ապագա իրադարձությունը տեղի չի ունենում մահից անմիջապես հետո: «Բոլոր մարմինը», ինչպես մենք գիտենք, մահից անմիջապես հետո չի գցվում դժոխքի կրակը, այլ թաղվում է: Այս բոլոր համարներում ակնարկ չկա, թե հոգին ընկնում է դժոխք մահից անմիջապես հետո, իսկ մարմինը՝ ուրիշ ժամանակ, ավելի ուշ:

Որոշ մարդկանց կարծիքով հոգին մարդու մտածող մասն է, իսկ մարմինը՝ կարծես նրա մահկանացու թաղանթը, որոշ առումով՝ հոգու բանտը: Այդ ուսմունքի համաձայն՝ մեղավոր մարդու հոգին անմիջապես ընկնում է դժոխք, և միայն երկար ժամանակ անց Աստված հարություն կտա նրա ժամանակավոր թաղանթին՝ մարմնին, և դատելով՝ կրակին կհանձնի: Ակամա հարց է առաջանում. արդարացի՞ է արդյոք, որ Աստված մահացածին ուղարկում է դժոխք, որտեղ նա կրակի մեջ տանջվում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ, իսկ աշխարհի վերջում հարություն կտա նրան և կկանչի դատաստանի, որպեսզի պարզի՝ նա պատժի արժանի՞ է, թե՞ ոչ: Մենք չենք կարող պատկերացնել, որ սիրող և ողորմած Աստվածը այդպես անարդարացի և դաժան լինի: Կրակի մեջ հավիտենական տանջանքների ուսմունքը երկնային Հոր բնավորությունը ներկայացնում է խեղաթյուրված և շատերին արդեն դրդել է մերժել Աստծուն:

Ե՞րբ մարդիկ իրենց մարմիններով հանդերձ կգցվեն գեհենը կամ կրակե լիճը:

Դա տեղի կունենա Աստծո վերջին մեծ դատաստանի օրը, երբ բոլոր մեռած մեղավորները հարություն կառնեն, որպեսզի ըստ արժանվույն պատժվեն: «Եվ դուրս կգան նրանք, որ բարի են գործել՝ դեպի կյանքի հարությունը, և նրանք որ չար են արել՝

դեպի դատաստանի հարությունը» (Հովհաննես 5.29): «Եվ ծովն իր միջի մեռելները տվեց, և մահը և դժոխքը (գերեզմանը) իրենց միջի մեռելները տվեցին. և ամեն մեկն իրենց գործերի համեմատ դատվեցին: Մահը և դժոխքը գցվեցին կրակի լճի մեջ. սա երկրորդ մահն է: Եվ եթե մեկը գրված չգտնվեց կյանքի գրքի մեջ, կրակի լճի մեջ գցվեց» (Հայտն. 20.13-15):

Քրիստոսը շատ պարզ ասում է, որ մեղավորների պատիժը կրակե գեհենում ապագայի իրադարձություն է: «Եվ ԵՐԲ ՈՐ մարդի Որդին Իր փառքով կգա. և ամեն սուրբ հրեշտակները Նրա հետ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ կնստի Իր փառաց աթոռի վրա. և ամեն ազգերը կժողովվե նրա առաջ... ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ կասի ձախ կողմիններին էլ. Ինձանից դեն գնացեք, ով անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար» (Մատթեոս 25.31,32,41):

«Եվ այժմյան երկինքը և երկիրս պահվում են կրակի համար դատաստանի և ամբարիշտ մարդկանց կորստյան օրում» (Բ Պետրոս 3.7):

Կրակը, որ կկորցնի անօրենների, կվառվի, երբ կգա «Տիրոջ օրը» (10 համար): «Եվ երկնքից կրակ իջավ Աստծուց և լափեց նրանց» (Հայտնություն 20.9):

Հետևաբար, կրակե գեհենը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր երկիրը, որը դատաստանի օրը կվերածվի կրակի լճի: Մաղաքիա մարգարեն հետևյալ խոսքերով է նկարագրում կրակի լիճը. «Որովհետև ահա գալիս է այն օրը, որ վառված է թոնրի պես, և բոլոր գոռոզներն ու չարագործները հարդի պես են լինելու, և նրանց պետք է այրի այն եկող օրը, ասում է Զորաց Տերը, որ նրանց համար արմատ և ոստ պիտի չթողնի»: Հետո մարգարեն մեզ մտքով ուղարկում է այն ժամանակը, երբ ամենը, որ մեղքով վարակված է, երկրի վրա կայրվի, և կրակով վերափոխված ու մաքրված երկիրը կտրվի փրկագնվածներին որպես սեփականություն: Նա ասում է. «Բայց ձեզ համար, որ իմ անունից վախենում եք, պիտի ծագի արդարության Արեգակը, և բժշկություն պիտի լինի Նրա թևերի վրա... եվ պիտի կոխ տաք ամբարիշտներին, որովհետև նրանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի թաթերի տակ այն օրը, որ ես կանեմ, ասում է Զորաց Տերը» (Մաղաքիա 4.1-3):

Այս տեքստերը կարդալիս, որոնցում խոսվում է մեղավորների պատժի մասին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել «կլափի» և «կայրի» բառերին: Երկու բառերն էլ նշանակում են ոչնչացում, բայց ոչ հավերժական այրում: Ամբարիշտներից միայն մոխիր կմնա՝ անշունչ, անկենդան, անգիտակից մոխիր: «Վերջ տվողը Նա է (Տերը). նեղությունը երկու անգամ վեր չի կենա: Որովհետև պիտի սպառվեն բոլորովին չոր հարդի պես» (Նաում 1.9,10): «Որովհետև ամբարիշտները կկորչեն, և Տիրոջ թշնամիները կոչնչանան ինչպես արտերի պարարտությունը, կփչանան ծուխի պես» (Սաղմոս 37.20):

Այսպիսով, մենք ծանոթացանք մեղավորների ճակատագրի մասին Աստվածաշնչի ուսմունքի չորս կետերին:

1. Մեղավորները մահից հետո անմիջապես դժոխք չեն ընկնում,

այլ գտնվում են գերեզմանում մինչև հարության և Աստծո դատաստանի օրը:

2. Ներկա ժամանակում ոչ ոք դժոխքում չի տանջվում: Մեղավորները կրակե լճում կայրվեն ոչ թե մահից հետո, այլ հարությունից և Աստծո դատաստանից հետո միայն: Առաջին մահից հետո, որի հետ մենք բախվում ենք ամեն քայլափոխի, մեղավորներին սպասվում է «երկրորդ մահը» կրակե լճում: Դա ապագայում կատարվելիք իրադարձություն է:

3. Ամբարիշտների պատժի տեղը կլինի մեր երկիրը, որը կրակի լճի կվերածվի ամեն ինչ ոչնչացնող Տիրոջ փառքից՝ Նրա հայտնվելով:

4. Այն բանից հետո, երբ ամբարիշտները կստանան «ամեն մեկն իրենց գործերի համեմատ», նրանք կդադարեն գոյություն ունենալուց: Կրակը, որը կոչնչացնի նրանց, կմաքրի երկիրը մեղքից և նրա բոլոր հետևանքներից:

Մենք չգիտենք, թե ինչքան ժամանակ այդ կրակը կայրի: Հայտնի է միայն, որ այն կոչնչացնի սատանային՝ որպես չարության արմատ, և բոլոր անօրեններին՝ որպես ճյուղեր:

Երբեմն մեզ խռովեցնում են «հավիտենական կորուստ» կամ «հավիտենական կրակ» բառերը: Մի՞թե այս խոսքերը չեն նշանակում, որ մեղավորները պետք է տանջվեն հավիտյան, անվերջ:

Որպեսզի ճիշտ հասկանանք դա, անհրաժեշտ է իմանալ «հավիտյան» բառի ճիշտ նշանակությունը հին լեզուներում, որոնցից արված է Աստվածաշնչի մեր թարգմանությունը: Պարզվում է, որ շատ դեպքերում «հավիտյան» բառը վերաբերում է առարկաների կամ անձանց, որոնք իրենք հավիտյան չեն: Օրինակ, Երկրորդ Օրինաց 15. 17-ում գրված է. «Եվ նա քեզ հավիտյան ծառա լինի»: Պարզ է, որ մարդը կարող է մեկ ուրիշ մարդու ծառա լինել, քանի դեռ նա ողջ է: Հուդայի թղթի 7-րդ համարում գրված է, որ Սոդոմը և Գոմորը «հավիտենական կրակի դատաստանին արժանացան»: Բայց մենք գիտենք, որ այդ քաղաքները վաղուց այրվել են, և նրանցից հետք էլ չի մնացել: Դա նորից է հաստատում այն միտքը, որ հավիտյան չի նշանակում անվերջ, եթե խոսքը ժամանակավոր բնույթի առարկաների կամ մեղավորների մասին է, որոնց համար Գրքի մյուս տեղերում ասվում է, որ նրանք վերջնականապես և անհետ պետք է ոչնչացվեն կրակով: Այդ հարցը ճիշտ հասկանալու համար չի կարելի եզրակացություն անել առանձին արտահայտությունների հիման վրա, այլ պետք է հաշվի առնել այն ամենը, ինչ Սուրբ Գիրքն ասում է այդ հարցի կապակցությամբ:

«Արքայության ավետարանը», որը Քրիստոսի հետևորդները Նրա պատվերի համաձայն պետք է քարոզեին բոլոր ժողովուրդներին ողջ երկրի վրա, իր մեջ ընդգրկում է նաև երկրի վերականգնումը սկզբնական, դրախտային տեսքով: Ներկա ժամանակում մենք երկրի վրա չենք տեսնում ոչինչ կատարյալ կամ հավիտենական: Ամեն ինչ վարակված և աղտոտված է մեղքով, ամեն ինչ ենթակա է մահվան և ապականման: Այդ ամենի մեղավորը սատանան է, որին Քրիստոսն անվանեց «այս աշխարհի իշխան»:

Քանի դեռ նա է իշխում երկրի վրա, դրությունը չի կարող փոխվել: Բայց մենք ունենք Աստծո խոստումը. «Նրա համար հայտնվեց Աստծո Որդին, որ սատանայի գործերը քանդի» (Ա Հովհաննես 3.8): Սատանայի գործերը կործանման են դատապարտված, իսկ դա նշանակում է, որ մեղքը, հիվանդությունները և մահը պետք է կատարելապես ոչնչանան, դրանց հետ և նա, ով բոլոր աղետների նախահայրն է: Փրկչի խաչի մահվան հետևանքների մասին մենք կարդում ենք, «որ իր մահով խափանի մահի իշխանությունն ունեցողին, այսինքն սատանային» (Եբրայեցիս 2.14): Երբ մեղքը՝ որպես սատանայի գործը, վերջնականապես կոչնչացվի, մեղքը թողնել չցանկացողները նույնպես կոչնչացվեն իրենց մեղավոր գործերի հետ միասին:

Ամբարիշտների ոչնչացմամբ Աստված կդրսևորի Իր ողորմությունն ու արդարացիությունը: Նրան հաճելի չէ մեղավորների ոչնչացումը կամ տանջանքը: «Կենդանի եմ Ես, ասում է Տեր Եհովան, որ Ես ամբարիշտի մեռնելը չեմ ուզում, այլ որ ամբարիշտը դարձի գա իր ճանապարհից և ապրի: Դարձե՛ք, դարձե՛ք ձեր չար ճանապարհներից, և ինչո՞ւ համար դուք մեռնեք, ո՛վ Իսրայելի տուն» (Եզեկիել 33. 11): Տերը յուրաքանչյուր մարդու կոչ է անում դարձի գալ, հեռանալ սեփական մեղավոր ճանապարհից, որպեսզի վերջիվերջո սատանայի և նրա հրեշտակների հետ միասին չհայտնվի կրակի լճի մեջ: «Իսկ վախկոտների և անհավատների, և պիղծերի և մարդասպանների և պոռնիկների, և կախարդների և կռապաշտների և ամեն ստախոսների բաժինը այս լճում կլինի, որ կրակով և ծծմբով վառված է: Սա է երկրորդ մահը» (Հայտնություն 21.8):

Յուրաքանչյուր մարդու ճակատագիրը կախված է այն ընտրությունից, որը նա կանի կյանքում: Նրանց, ովքեր որոշել են ծառայել Աստծուն, ճանապարհը կտանի վերականգնված դրախտ, իսկ Աստծուց երես թեքողներին, Նրա օգնությունից և փրկությունից հրաժարվողներին սպասվում է ոչնչացում կրակի մեջ: Մենք ցանկանում ենք, որ այս տողերը կարդացողներից ոչ ոք չլինի նրանց թվում, ում Քրիստոսը դատաստանի օրը կասի. «Ինձանից դե՛ն գնացեք, ո՛վ անօրենություն գործողներ» (Մատթեոս 7.23), «Ինձանից դե՛ն գնացեք, ո՛վ անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար» (Մատթեոս 25.41), այլ ուզում ենք, որ յուրաքանչյուրը կարողանա լսել թանկագին լուրը Քրիստոսի շուրթերից. «Եկե՛ք, ո՛վ Իմ Հոր օրհնածները, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը» (Մատթեոս 25.34): «Բայց Նրա խոստումի պես՝ նոր երկնքի և նոր երկրի ենք սպասում, որոնցում արդարություն է բնակվում» (Բ Պետրոս 3.13): Փրկիչը խոստացավ. «Երանի՜ հեզերին, որ նրանք կժառանգեն երկիրը» (Մատթեոս 5.5): Կլինե՞ք արդյոք դուք այնտեղ: